ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարում է բաց մրցույթ՝ **«ԼՂՀ մշակույթի և երիտասարդության պալատ»** պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

«ԼՂՀ մշակույթի և երիտասարդության պալատ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել Արցախի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք ունեն՝

ա) բարձրագույն կրթություն,
բ) տնօրենի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /այդ թվում՝ ԱՀ Սահմանադրություն, աշխատանքային օրենսգիրք, պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ԼՂՀ օրենքը, մշակույթի ոլորտի Արցախի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր/:

Հավակնորդները պետք է ունենան կազմակերպության զարգացման տեսլական:

ԼՂՀ մշակույթի և երիտասարդության պալատի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
ա) գրավոր դիմում ԱՀ ԿԳՄՍ նախարարի անունով,
բ) 3x4 չափսի երկու լուսանկար,
գ) աշխատանքային գրքույկի պատճեն,
դ) ինքնակենսագրություն,
ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն,
զ) տեղեկանք մշտական բնակության վայրից,
ը) բնութագիր վերջին աշխատավայրից /եթե կազմակերպությունը չի լուծարվել/,
թ) զինվորական գրքույկ կամ զինապարտության մասին փաստաթուղթ:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները /փաստաթղթերը բնօրինակներով/ ներկայացնել 2023 թվականի սեպտեմբերի 4-7-ը, ժամը՝ 10:00-ից 12:00-ը նախարարության աշխատակազմի կադրերի բաժին:
Հասցե՝ Թումանյան 48, հեռ.՝ (047) 96 19 35

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի սեպտեմբերի 11-ին, ժամը 10:00-ին՝ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում: